ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հետազոտող ուսուցիչ՝ Ն.Ջանիբեկյան

ՀՀ Արմավիրի մարզի Գետաշենի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Ռ. Աղաջանյան

Արմավիր- 2022

Բովանդակություն

Ներածություն…… 3

Գրականության ակնարկ…….. 5

Հետազոտության ընթացք…… 9

Եզրակացություն…… 23

Գրականության ցանկ…… 24

Ներածություն

Մանկավարժական գործունեությամբ զբաղվող ցանկացած անհատ կփաստի, որ պակասել է մերօրյա սովորողի հետաքրքրությունը դեպի ուսումն ու կրթությունը, նրանց համար այն դարձել է պարտադրված ու ոչ հաճելի գործընթաց: Մենք՝ մանկավարժներս վերը նշված ցավոտ խնդրի վերաբերյալ հաճախ ենք մեզ տալիս <<**ինչու՞>>** հարցը՝ ցանկանալով գտնել պատճառը: Տեսակետները այս հարցի շուրջ բազմազան են, կան տարակարծություններ: Ոմանք կարծում են, որ պատճառը սոցիալական արմատներ ունի, այսինքն՝ ընտանիքի սուղ ֆինանսական պայմանները, հանապազօրյա ապրուստի հայթայթմամբ տարված ծնողները չեն հասցնում հետաքրքրվել իրենց երեխայի կրթությամբ եւ ծնողների՝ չակերտավոր ասած անտարբերությունը, կարող է լինել պատճառներից մեկը: Մյուսները կարծում են, որ սմարթ հեռախոսներն ու ինտերնետն են պատճառը, որտեղ երեխաները կորցնում են իրենց ժամանակի կառավարումը եւ բավարար ժամանակ չեն հատկացնում դասերին պատրաստվելու համար, կան նաեւ ուրիշ տեսակետներ: Իմ սուբյեկտիվ կարծիքով, մերօրյա սովորողին կրթական նոր միջավայր եւ գործիքներ են անհրաժեշտ, վերջինս ուզում է, որ ինքն օբյեկտից դառնա սուբյեկտ:

Ժամանակները փոխվում են , պահանջները՝ նույնպես: Ուստի փորձը ցույց է տալիս, որ արդի մարտահրավերներին դիմակայելու համար ակադեմիական գիտելիքները կամ դրանց տեսական մասին միայն տիրապետելը բավական չէ: Մերօրյա սովորողին պետք են նաև գործնական հմտություններ, նախաձեռնողականություն, առաջնորդական հմտություններ, քննադատական մտածողություն, այլընտրանքային տարբերակներ գտնելու հմտություններ, սահմանափակ միջոցներով մեծ գործեր անելու հմտություններ և ամենակարևորը մոտիվացիա ուսման նկատմամբ:

Վերը թվարկված այս բոլոր հմտությունները ու կարողությունները զարգացնում է նախագծային ուսուցումը, որը նաև հնարավորություն է տալիս սովորողին հասկանալու ,թե նա ինչո՞ւ է սովորում այս կամ այն դասը և որտե՞ղ է կիրառելու ձեռք բերած գիտելիքները: Նախագծային ուսուցումը սովորողին տալիս է մտածելու և արարելու հնարավորություն, որի ընթացքում սովորողները բացահայտում են իրենց ներուժը, ընդունակությունները, ձեռք են բերում համագործակցելու ,հաղորդակցվելու

և այլ շատ կարևոր հատկանիշներ և արժեքներ: Եվ ,այստեղ տեղին է հիշել չինական հայտնի ասացվածքը՝

<< Պատմիր ինձ, եւ ես կմոռանամ, ցույց տուր ինձ եւ ես կհիշեմ , ներգրավիր ինձ եւ ես կսովորեմ>>:

Ուսուցման գործընթացում նախագծային տեխնոլոգիան համարվում է ինտերակտիվ, այն նպաստում է սովորողների ինքնուրույն գիտելիքների ձեռքբերմանը, ձեւավորում է առանձնահատուկ կարողություններ ու հմտություններ տեղեկատվական դաշտում և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, հետազոտական աշխատանքներ կազմակերպելու համար , ինչպես նաև գտնելու ոչ ստանդարտ լուծումներ քննադատական մտածողության ձեւավորելու համար:

<<Նախագիծ>> ֆրանսերենից թարգմանած նշանակում է դեպի առաջ, ճանապարհ դեպի նպատակ: Նախագծային ուսուցման ընդհանուր նպատակներն են՝

1. Ձեռք բերել փորձ եւ գիտելիք տվյալ ոլորտում:
2. Ստեղծել նախագիծ նախկինում ձեռք բերված գիտելիքների և ներկա ուսումնասիրությունների վրա:
3. Ձեւավորել ինքնուրույն աշխատելու,այլոց հետ համատեղ համագործակցելու ,ժամանակահատվածը հստակ բաշխելու կարողություններ և հմտություններ:
4. Զարգացնել սովորողների մոտ կազմակերպչական հմտություններ և կարողություններ:
5. Բարձրացել սեփական անձի ինքնավստահությունը եւ վերահսկողությունը:

Այսպիսով՝ նախագծային ուսուցումը ժամանակի հրամայական է, այն լուծում է արդի կրթական համակարգի առաջ ծառացած մի շարք խնդիրներ, նպաստում է կրթության նկատմամբ սովորողների հետաքրքրասիրության բարձրացմանը, կերտում է կյանքի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացիներ:

Գրականության ակնարկ

Նախագծային մեթոդը նորույթ չէ մանկավարժության մեջ: <<Այն ներդրվել է Եվրոպայում 18-րդ դարում ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում ձեռք բերած հմտություններն ու գիտելիքները, երբ պետք է լուծեին օրինակ հուշարձանի նախագծման խնդիրներ>>(Knoll,Michael (1997):The Project Method: Its Vocational Education origin and International Development .p.59-80):

Այս բազմափուլ գործընթացը ներկայացվել է ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուիի եւ իր աշակերտ Վ.Խ.Կլիպատրիկի կողմից: Նրանք առաջարկում էին ուսուցումը կազմակերպել հաշվի առնելով սովորողի հետաքրքրությունները, նրա ակտիվ, ինքնուրույն, նպատակաուղղված անհատական կամ խմբային գործունեությունը, որի ընթացքում կարող է լուծվել որոշակի հիմնախնդիր: Ռուսաստանում այս մեթոդով աշխատել է Ս.Տ. Շատսկին: Հեղափոխությունից հետո 1931թվականին մեթոդը համարվել է խորհրդային դպրոցի համար անընդունելի եւ կիրառումը արգելվել է: 20-րդ դարի 80-ական թվականներին նոր միայն մասնակի կիրառություն է ունեցել խորհրդային դպրոցներում: Անցյալ դարի 90-ական թվականներից նախագծային մեթոդը իր հիմնավոր տեղն է զբաղեցնում աշխարհի առաջատար երկրներում կիրառվող կրթական տեխնոլոգիաներում որպես ոչ ավանդական ուսուցման ձև եւ սովորողներին մղում է դեպի հետազոտական , ստեղծագործական գործունեության եւ հնարավորություն ընձեռնում որոշակի լուծումներ գտնելու համար :

Նախագծային մեթոդը որոշակի հաջորդականությամբ իրականացվող հնարների , գործողությունների, համախումբ է, միտված դրված նպատակի իրականացմանը: Ուսուցման այս եղանակով սովորողն անմիջականորեն ընդգրկվում է ակտիվ իմացական գործընթացների մեջ, նա ինքնուրույն ձեւակերպում է իր խնդիրը, իրականացնում է անհրաժեշտ տեղեկույթի հավաքագրում, պլանավորում է խնդրի լուծման տարբերակներ, եզրակացություններ անում, վերլուծում է սեփական գործունեությունը եւ, որպես հետեւանք, ձեռք է բերում նոր գիտելիքներ ու կենսափորձ: Նախագծային ուսուցման մեթոդը շատ ճկուն է եւ կիրառելի է սովորողների բոլոր տարիքային խմբերի և առարկաների դեպքում: <<Ուսուցչին այս գործում հատկացվում է նախագիծը մշակողի, կոորդինատորի, խորհրդատուի եւ փորձագետի

դերեր>>(.<<Ֆինանսական կրթություն> մեթոդական ձեռնարկ Ս. Հակոբյան, Շ. Ղազարյան էջ 37):

Նախագծերի դասակարգումը: Ըստ մասնակիցների թվաքանակի նախագիծը կարող է անհատական, զույգերով, խմբային, կոլեկտիվ , մասսայական, իսկ ըստ բովանդակությա**ն լինում են մոնոնախագիծ(առարկայի սահմաններում) եւ միջառարկայական (երկու եւ ավելի** առարկաների սահմաններում): Նախագծերը դասակարգվում են նաև ըստ տևողության՝ լինելով մինինախագիծ (մեկ դասաժամի համար), կարճաժամկետ (4-6դասաժամի համար), միջնաժամկետ (1-4 շաբաթվա համար) եւ երկարաժամկետ (4 շաբաթից մինչև մեկ տարի): Ըստ գործունեության տիպի՝առանձնացվում են տեղեկատվական, հետազոտական, ստեղծագործական եւ գործնական կողմնորոշման նախագծեր:

Նախագծային աշխատանքը բաղկացած է չորս հիմնական փուլերից՝

1. Նախապատրաստական փուլ
2. Պլանավորման փուլ
3. Կազմակերպչական - հետազոտական փուլ
4. Արդյունքների ներկայացման փուլ

Նախապատրաստական փուլն իր մեջ ներառում է ներքոհիշյալ քայլերը

- նախագծային խմբի ձեւավորում,
- խմբերի ղեկավարների ընտրություն ,
- թեմայի ընտրություն,
- նախագծի նպատակի , խնդիրների ,ենթադրվող հիպոթեզների ձեւավորում,
- ռազմավարության ընտրություն,
- նախնական պլանի մշակում,
- գրականության ուսումնասիրում:

Պլանավորման փուլն իր մեջ ներառում է

- ժամկետների որոշում
- հնարավոր արդյունքների քննարկում
- ուսումնական խնդիրների բաշխումը մասնակիցների միջև:

Կազմակերպչական - հետազոտական փուլ կազմված է հետեւյալ հաջորդական քայլերից

● կազմվում է նախագծային աշխատանքների իրականացման հաջորդականությունը,

● տրվում են կոնկրետ հանձնարարություններ խմբի յուրաքանչյուր անդամին,

● հավաքվում եւ մշակվում է տեղեկատվությունը, պատրաստվում են եզրահանգումներ,որոնք համադրվում են դրված խնդիրների եւ ենթադրվող հիպոթեզների հետ,

● ձեւակերպվում են հետազոտության արդյունքները եւ պատրաստվում է ներկայացման (ձեւաչափը ընտրում են սովորողները):

Արդյունքների ներկայացման փուլն իր մեջ ներառում է հետեւյալ բաղկացուցիչ մասերը

● նախագծի աշխատանքի շնորհանդես,

● նախագծի ընթացքում կատարված աշխատանքների քննարկում

● նախագծային աշխատանքների գնահատում ամբողջ խմբի եւ նրա յուրաքանչյուր անդամի համար:

Նախագծային ուսուցման վերջնարդյունքները: Նախագծային ուսուցումը սովորողի մոտ ձեւավորում է կրթական նոր չափորոշչով սահմանված կարողունակություններ, ինչպիսիք են՝

1.դրսեւորել տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին

2.հասկանալ իր առջև դրված խնդիրը, մշակել և կատարել քայլեր այն լուծելու համար.

3.համատեղ կամ ինքնուրույն իրականացնել պարզ հետազոտական աշխատանքներ, անել եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերն օգտագործել իր գաղափարները հիմնավորելու համար և ներկայացնել ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով.

4.կարևորել սովորելը և ցուցաբերել հետաքրքրություն սովորելու նկատմամբ.

5.ճանաչել տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանությունը.

6.ստեղծել ընկերական հարաբերություններ, լսել, հասկանալ, ապրումակցել, քաջալերել և աջակցել մյուսներին, համագործակցել տարբեր ձևաչափերով, դրսևորել դրական վերաբերմունք, ձգտել կոնֆլիկտների խաղաղ լուծմանը.

7.արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցել իր յուրահատուկ լինելը.

8.ցուցաբերել հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն

9.գտնել իր սխալները և քայլեր անել դրանք ինքնուրույն կամ աջակցությամբ ուղղելու համար.

10.կիրառել տեքստային և գրաֆիկական խմբագրիչները, այդ թվում՝ աջակցող տեխնոլոգիաներ, կարողանա մշակել տվյալներ՝ օգտագործելով անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր:

Հետազոտության ընթացք

2021-2022 ուստարում իրականացրել եմ նախագծային աշխատանք 7-րդ դասարանի աշակերտների հետ: Աշխատանքը կամընտրական սկզբունքով էր, այն ենթադրում էր արտժամյա պարապմունքներ, լրացուցիչ աշխատանք: Նախագծային աշխատանքների իրականացմանը իրենց ցանկությամբ ներգրավվեցին վեց աշակերտ 7-րդ դասարանից:

Սկզբնական պարապմունքների ժամանակ աշակերտները ծանոթացան նախագծային ուսուցման մեթոդին , նախագծային աշխատանքի իրականացման փուլերին, Վենի դիագրամ մեթոդով համեմատեցին ավանդական ուսուցման հետ, արեցին շատ հետաքրքիր դատողություններ, մեջբերում եմ.

-Այս մեթոդը ինձ գրավեց, քանի որ ես կկարողանամ դրսևորել իմ անհատականությունը(Օֆելյա):

-Այն կզարգացնի մեր ստեղծագործելու կարողությունները(Օնիկ):

-Ավանդական ուսուցման ժամանակ մենք ստանում ենք առավելապես տեսական գիտելիքներ, որոնք շատ շուտ մոռանում ենք, իսկ նախագծային ուսուցման դեպքում ձեռք բերած գիտելիքը գիտենք ՝ որտեղ կարող ենք կիրառել(Արմենուհի):

Նախապատրաստական փուլ: Այս փուլում ձևավորվեց վեց հոգուց բաղկացած նախագծային մեկ խումբ՝ երեք տղա, երեք աղջիկ: Փակ քվեարկությամբ աշակերտները ընտրեցին խմբի ղեկավար: Աշակերտներին առաջադրեցի նախագծային աշխատանքների թեմաներ, որոնք բխում էին հանրակրթական առարկայական չափորոշչից : Այդ թեմաներն էին՝ <<Արդյունավետ բնօգտագործում>>, <<Գյուղատնտեսություն>>,

<< Տրանսպորտ>>: Աշակերտները քվեարկության միջոցով ձայների մեծամասնությամբ, որպես **մեծ գաղափար ՝ ընտրեցին <<Գյուղատնտեսություն>>** թեման: Հիմնավորեցին թեմայի ընտրությունը՝ արտահայտելով իրենց կարծիքները, մեջբերում եմ.

-Ցավոտ հարց է(Մանյա):

-Մեր համայնքում պակասել է գյուղատնտեսությամբ զբաղվող մարդկանց թիվը(Վարդգես):

-Ուզում եմ գյուղատնտեսական գիտելիքներ ձեռք բերել ու լավ ֆերմեր դառնալ(Հրանտ):

Հստակեցրին նախագծի նպատակը, ձևակերպեցին մեծ գաղափարից բխող կարևոր հարցը, այն է՝<< **Ինչպե՞ս խթանել գյուղատնտեսության այլընտրանքային ուղղությունները համայնքում>>**: <<Կարևոր հարցը>> այն հարցն է ,որին աշակերտները ուզում են պատասխան գտնել նորարարության միջոցով: Սահմանեցին **փոփոխությունը,** այն է՝ <<**Ունենալ գյուղատնտեսությունից ստացվող եկամուտների աճ համայնքում>> :** Փոփոխությունը այն վերջնարդյունքն է, որին աշակերտներն ուզում են հասնել նախագիծն իրականացնելուց հետո:

Պլանավորման փուլ: Այս փուլում բացի կարևոր հարցից աշակերտները կազմել են այլ հարցեր ,որոնք օգնել են խորազնին հետազոտություն անցկացնել: Հետազոտության հարցերը բխում էին իրենց ընտրած մեծ գաղափարից ու կարևոր հարցից: Հետազոտության հարցերը գրելուց հետո առանձնացրել են ռեսուրսներ ու գործողություններ, որոնք անհրաժեշտ էին հարցերի պատասխանները գտնելու համար(տես աղյուսակ 1.):

Աղյուսակ 1.

Հարց	Ռեսուրս	Գործողություն	Պատասխան ատու
1.Գյուղատնտեսության ինչ՞ այլընտրանքային ուղղություններ կան եւ որո՞նք են համարվում հեռանկարային մեր ժամանակներում:	Դպրոցի տնօրեն	հարցազրույց անցկացնել	Վարդգես, Հրանտ
2.Ի՞նչ ռիսկեր կարող են պարունակել գյուղատնտեսության այլընտրանքային ուղղությունները:	Դպրոցի տնօրեն	հարցազրույց անցկացնել	Վարդգես, Հրանտ

3.Ի՞նչ եք կարծում սնկի արտադրությունը կարող է նորարար եւ եկամտաբեր ճյուղ համարվել մեր համայնքում զարգացնելու համար:	Դպրոցի տնօրեն	հարցազրույց անցկացնել	Վարդգես, Հրանտ
4.Ինչ՞ աշխատանքներ եւ տեխնոլոգիաներ են պահանջվում սնկի արտադրության համար:	Դպրոցի տնօրեն	հարցազրույց անցկացնել	Վարդգես, Հրանտ
5.Մեր դպրոցում կա՞ հարմար վայր ,որտեղ կարող ենք կազմակերպել սնկի աճեցում	Դպրոցի տնօրեն	հարցազրույց անցկացնել	Վարդգես, Հրանտ
6.Ինչ՞ կենսաբանական հատկանիշներ ունեն սնկերը:	Կենսաբանության ուսուցչուհի Մ.Վարդանյան	Հարցազրույց	Մանյա, Արմենուհի
7.Ինչ՞ պայմաններ են պետք, որ սունկը բարեհաջող աճի, հատկապես կախասունկ աճեցնելու համար:	Կենսաբանության ուսուցչուհի Մ.Վարդանյան	Հարցազրույց	Մանյա, Արմենուհի
8.Սննդային ի՞նչ արժեք ունեն սնկերը:	Կենսաբանության ուսուցչուհի	Հարցազրույց	Մանյա, Արմենուհի

9.Արդյոք Հայաստանյան շուկայում կա՞ սնկի պահանջարկ:	Տնօրեն Կենսաբանության ուսուցչուհի Համացանց	Հարցազրույց Փնտրել համացանցում	Մանյա, Արմենուհի
10.Արդի հայկական խոհանոցում արդյոք շատ է օգտագործվում սունկը:	Դպրոցի խոհարարներ Մայրիկներ Տատիկներ	Հարցազրույց	Մանյա, Արմենուհի, Օֆելյա, Հրանտ, Վարդգես, Օնիկ
11.Մեր համայնքում ինչ՞ավանդական կերակուրներ կան, որոնց բաղադրության մեջ սունկ կա	Դպրոցի խոհարարներ Մայրիկներ Տատիկներ	Հարցազրույց	Մանյա, Արմենուհի, Օֆելյա, Հրանտ, Վարդգես,Օնիկ

Երբ աշակերտները համախմբված են մեկ գաղափարի շուրջ:



Կազմակերպչական- հետազոտական փուլ: Հարկ է հիշել, որ նախքան նախագիծ գրելը պետք է համոզվել, որ ձեռք բերած տեղեկությունները ճշգրիտ են ու հավաստի, այսինքն՝ այն աղբյուրները, որոնցից օգտվել են աշակերտները, պրոֆեսիոնալ են և արժանահավատ: Ուստի՝ աշակերտները ձեռք բերած տեղեկատվությունը ստուգել են մի քանի աղբյուրներից, համոզվելու համար, որ այն նույնական է:

Յուրաքանչյուր համայնք լի է անսահման նորարարական հնարավորություններով եւ մեր աշակերտները ունեն ներուժ՝ բացահայտելու դրանք: Ներքոհիշյալ գործիքի միջոցով աշակերտները կատարել են համայնքի վերլուծություն՝ պարզելով նրա ուժեղ կողմերը, բարելավման ուղղությունները, ռիսկերն ու հնարավորությունները

Աշակերտները հետազոտելով իրենց ընտրած թեման, հավաքելով ու ճշգրտելով ձեռք բերած տեղեկատվությունը, ինչպես նաև ուսումնասիրելով համայնքը և նրա խնդիրները, հանդես են եկել տարբեր նախագծերի առաջարկներով (տես աղյուսակ 2), որոնցից քվեարկության արդյունքում ընտրել են կախասնկի աճեցումը:

Աղյուսակ 2.

Ո՞րն է ձեր «մեծ գաղափարը»	Ո՞րն է «կարեւոր հարցը»	Ո՞րն եք համարում ձեր հետազոտության ամենակարեւոր մասը: Ո՞րն է ամենակարեւոր ինֆորմացիան , որ պարզեցիք հետազոտությամբ:	Հաշվի առնելով ձեր հետազոտությունը, ի՞նչ լուծում կառաջարկեք, որ ամենաօգտակարը կլինի ձեր համայնքի համար:
Գյուղատնտեսություն	Ինչպես՞ խթանել գյուղատնտեսության այլընտրանքային ուղղությունները մեր համայնքում:	**Հրանտ**- Մենք պարզեցինք ,որ գյուղատնտեսության վարման ավանդական ճյուղերն արդեն եկամտաբեր չեն:	Հիմնել խելացի ջերմոց
		Վարդգես- Պարզվեց ,որ տարեցտարի չմշակվող հողատարածքները մեծանում են ,քանի որ բերքի իրացման խնդիր կա:	Տնկել ինտենսիվ այգիներ
		Օնիկ- Մեր գյուղի գրեթե բոլոր տները նույն սիստեմով են կառուցվում	Կազմակերպել կախասնկի աճեցում (նախ դպրոցի մառանում

		,այսինքն ունեն մեծ ստորգետնյա մառաններ ,որտեղ կարելի է կախասնկի աճեցմամբ զբաղվել:	փորձել ,ապա դրական փորձը տարածել համայնքում):
		Օֆելյա- ես պարզեցի ,որ մեր գյուղում շատ լավ են վարդեր աճում:	Կարելի է վարդի տնկիներ ձեռք բերել եւ զբաղվել վարդեր աճեցնելով:
		Մանյա -համայնքի բնակիչների հետ զրույցից հասկացա, որ շատ ու որակով բերք ստանալու համար շատ են օգտագործում քիմիական պարարտանյութեր ,որոնք թանկ արժեն եւ առողջության համար էլ վնասակար են:	Առաջարկում եմ էկոպարարտանյութի ստացում կազմակերպել:

Ներքոհիշյալ փաստերըսովորողները ձեռք են բերել հետազոտության ընթացքում, որոնք վկայում են առաջարկված նախագծի առաջնահերթության, արդիականության և իրատեսականության մասին:

ՓԱՍ 1.Գյուղատնտեսության ավանդական ուղղությունները դարձել են պակաս եկամտաբեր , քանի որ դրանց դեպքում ռիսկերը շատ են՝ եղանակային անբարենպաստ պայմաններ , մեծածավալ ծախսեր բերքի ստացման համար, սպառման շուկայի բացակայություն, ոռոգման ջրի հիմնախնդիր և այլն:

ԱՂԲՅՈՒՐԸ՝ագրոգրագետ Գ. Մուքոյան

համայնքի բնակիչներ

ՓԱՍՏ 2.Համայնքում կան հնարավորություններ գյուղատնտեսության այլընտրանքային, նորարարական ճյուղերի զարգացման համար, օրինակ՝ ինտենսիվ այգիների հիմնում, սնկի աճեցում , խելացի ջերմոցներ, որոնք ավելի քիչ ռիսկեր են պարուունակում և ավելի եկամտաբեր են:

ԱՂԲՅՈՒՐԸ՝ագրոգրագետ Գ. Մուքոյան

համայնքի բնակիչներ

ՓԱՍՏ 3.Սնկի աճեցմամբ զբաղվելը բարդ գործ չէ, հատուկ խնամք և ծախսեր չի պահանջում, չկան ռիսկեր,միայն համապատասխան խոնավություն և ջերմություն ապահովելով կարելի է ստանալ բերքը և կարևոր է նաև ,որ տարիքային գործոնով պայմանավորված չէ, այսինքն՝ սովորողների տարիքային խումբը ևս կարող է իրականացնել սնկի խնամքը:

ԱՂԲՅՈՒՐԸ՝կենսաբանության ուսուցչուհի Մ. Վարդանյան

աշխարհագրության ուսուցչուհի Ն.Ջանիբեկյան

ՓԱՍՏ 4.Սկզբնական փուլում սնկի աճեցումը կկազմակերպենք դպրոցի նկուղում ,որը մեզ հատկացրել է տնօրենը: Եթե իրեն արդարացրեց մեր նախաձեռնությունը և ստացանք բարձր բերք, մեր դրական փորձը կտարածենք ու կզարգացնենք համայնքում՝ որպես գյուղատնտեսության այլընտրանքային ճյուղ , որը ի տարբերություն գյուղատնտեսության մյուս ճյուղերի շուրջտարյա է:

ԱՂԲՅՈՒՐԸ՝կենսաբանության ուսուցչուհի Մ. Վարդանյան

աշխարհագրության ուսուցչուհի Ն.Ջանիբեկյան

դպրոցի տնօրեն Գ. Մուքոյան

ՓԱՍՏ 5.Սունկը շատ է օգտագործվում ժամանակակից հայկական խոհանոցում տարբեր ուտեստների ,հատկապես մեր՝ երեխաներիս համար սիրելի աղցանների մեջ:Մեր համայնքում կան նաև սնկով պատրասվող ավանդական կերակուրներ՝ հաճարով – սնկով փլավ, սնկով ձվածեղ,սնկով ապուր և այլն:

ԱՂԲՅՈՒՐԸ՝դպրոցի ճաշարանի խոհարարներ՝ Մարգարիտա, Կարինե

համայնքի բնակչուհիներ՝ մայրիկներ ,տատիկներ

ՓԱՍՏ 6.Սնկերը շատ առողջարար են և պայքարում են մի շարք հիվանդությունների դեմ: Սնկերը շատ ամինաթթուներ են պարունակում, ,որոնք նպաստում են հիշողության բարելավմանը,խոլեսթերինի մակարդակի նվազեցմանը և կանխում աթերոսկլերոզի ու դրա հետ կապված սրտային և ուղեղի մի շարք հիվանդություններ:Սունկը քիչ ածխաջրածին է պարունակում և կարող են օգտագործել նաև շաքարախտով հիվանդ մարդիկ:

ԱՂԲՅՈՒՐԸ՝ տեղամասային բժշկուհի Ս. Հակոբջանյան

կենսաբանության ուսուցչուհի Մ. Վարդանյան

Նախագծի առաջարկից հետո աշակերտները կազմել են նախագծի իրականացման ժամանակացույցը (տես աղյուսակ 3.):

Աղյուսակ 3.

ՔԱՅԼԸ	ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ՕԳՆԱԿԱՆ
1.Նախագծի մասին խոսել դպրոցի տնօրենի հետ:	Նոյեմբերի 03	Հրանտ, Վարդգես	Օնիկ
2.Հետադարձ կապից հետո վերանայել նախագիծը:	Նոյեմբերի 04	Մանյա , Օֆելյա	Արմենուհի
3.Նախագծի մասին տեսանյութ պատրաստել:	Նոյեմբերի 06	Արմենուհի, Օնիկ	Հրանտ, Վարդգես,Մանյա,Օֆելյա

4.Ստեղծել ՖԲ էջ	Նոյեմբերի 10	Ն.Ջանիբեկյան	Հրանտ, Վարդգես,Մանյա,Օֆելյա, Արմենուհի ,Օնիկ
5.Կազմակերպել դրամահավաքի միջոցառումը:	Նոյեմբերի 22-ից –հունվարի 10-ը	Ն.Ջանիբեկյան	Հրանտ, Վարդգես,Մանյա,Օֆելյա, Արմենուհի ,Օնիկ
6.Ուսումնասիրել Սնկարանի ստեղծման տարածքը:	Փետրվարի 1-4ը	Թիմի անդամներ	Դպրոցի աշակերտներ
7.Տարածքի նախապատրաստում՝ Մաքրում Օդափոխում Ախտահանում Պատերի սպիտակեցում	Փետրվարի 7-11ը	Թիմի անդամներ	Դպրոցի աշակերտներ, Տնօրեն, մանկ.կոլեկտիվ
8.Սնկարանի համար անհրաժեշտ պարագաների գնում	Փետրվարի 14-15ը	Թիմի անդամներ Ուսուցիչ-առաջնորդ՝ Նելլի Ջանիբեկյան	Տնօրեն, մանկ.կոլեկտիվ, Համայնքի բնակիչներ
9.Կախասնկերի պատվիրում, գնում, տեղափոխում համայնք	Փետրվարի 21-25ը	Թիմի անդամներ Ուսուցիչ-առաջնորդ՝ Նելլի Ջանիբեկյան	Տնօրեն, մանկ.կոլեկտիվ, Համայնքի բնակիչներ

10.Մնկարանի ստեղծում	Մարտի 1-ին	Թիմի անդամներ Ուսուցիչ-առաջնորդ՝ Նելլի Ջանիբեկյան	Դպրոցի աշակերտներ, Տնօրեն, մանկ.կոլեկտիվ

Աշակերտները ժամանակացույցը կազմելուց հետո հաջորդիվ ուսումնասիրել են շուկան և կազմել են նախագծի իրականացման համար անհրաժեշտ բյուջեն (տես աղյուսակ 4.) :

Աղյուսակ 4.

Ապրանք	Նկարագիր,նպատակ	Գինը միավորի համար	Չափը	Քանակը	Ընդհանուր գումարը
1.Կրաքար	տարածքը սպիտակեցնելու,ախտահանելու համար	250դր.	կգ	15	00
2.Հոսանքի լար	տարածքը էլեկտրաֆիկացնելու համար	250դր.	մ	30	00
3.Պողպատյա լար	կախասնկի պարկերը ամրացնելու համար	80դր.	մ	60	00

4.Ամրացնող անկեռներ	կախասնկի պարկերը կախելու համար	500	հատ	16	00
5.Լույսեր	տարածքը լուսավորելու համար	4000դ ր.	հատ	6	00
6.Խոնավացնող աեորոզոլ	կախասնկերը ջրելու համար	2000դ ր.	հատ	1	2000դր.
7.Կախասնկի պարկեր	սնկի աճեցումը պարկերի մեջ է իրականացվելու	1800դ ր.	հատ	60	108000դ ր.
8.Տեղափոխում	կախասնկի պարկերի տեղափոխում բեռնատարով Զովունիից-Գետաշեն	200	կմ	90	18000 200000դ ր

Բյուջեն կազմելուց հետո աշակերտներն ուսուցչի օգնությամբ classy.org հարթակում տեղադրել են իրենց նախագծի համառոտ նկարագիրը և ուսուցչի վերահսկողությամբ կազմակերպել են դրամահավաք: Նախագծին հավանություն տված մարդկանց հանգանակությունների շնորհիվ բյուջեով նախատեսված ողջ գումարը հավաքվել է, և նախագիծը կյանքի է կոչվել:

Որպես վերջաբան՝

Ամպրոպից ու անձրևից հետո աճում է սունկը, իսկ հաջողված գաղափարներից ծնվում են մեծ փոփոխությունները:

Ն.Ջանիբեկյան

Նախագիծը՝ որպես իրողություն…

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր աշակերտներն ունեն մեծ պոտենցիալ եւ պատրաստակամություն սովորելու, նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու, նախաձեռնողականություն դրսևորելու, իրենց համայնքներում փոփոխություններ բերելու համար: Մենք՝ մանկավարժներս պետք է դրսևորենք մեծ պատասխանատվություն և պատրաստակամություն բացահայտելու և զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը: Իսկ դա հնարավոր է անել միայն ճիշտ ընտրված կրթական գործիքի միջոցով, ինչպիսին՝ օրինակ նախագծային ուսուցման մեթոդն է:

Այս նախագիծը իրականացնելով՝ աշակերտները ձեռք բերեցին խորացված գիտելիքներ աշխարհագրություն առարկայից՝

1.Ցույց տալով կլիմայի, եղանակային պայմանների և գյուղատնտեսության աշխարհագրական տեղաբաշխման կապը:

2. Համեմատելով գյուղատնտեսության ավանդական և ժամանակակից ուղղությունները, դատողություններ արեցին դրանց առավելությունների և թերությունների մասին:

3.Գնահատեցին հողը՝ որպես բնության ամենակարևոր ռեսուրս և գյուղատնտեսության միակ արտադրամիջոց: Համոզվեցին, որ հողի մշակը պետք է ունենա հարուստ ագրոգիտելիքներ , այլապես սխալ մշակման հետևանքով հողը կարող է դեգրադացվել և այլևս պիտանի չլինել երկրագործության համար:

4.Գնահատեցին գյուղատնտեսության դերը մեր երկիր տնտեսության մեջ , այն դեպքում ,երբ մեր երկիրը հարուստ չէ այլ ռեսուրսներով և օգտակար հանածոներով:

Նախագծի շրջանակներում աշակերտները ձեռք բերեցին նաև

հետևյալ հմտությունները՝

1.Դասագրքի էջերից դուրս ուսումնասիրելով զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրների փորձը և նրանց հաջողության տեսությունը՝ ձեռք բերեցին գլոբալ հաջողված փորձի տեղայնացման հմտություններ:

2. Ձեռք բերեցին նաև արտադրելու և արտադրանքը իրացնելու հմտություններ:

3. Արտադրանքը շուկայում մրցունակ դարձնելու,տարբեր գովազդներ պատրաստելու հմտություններ:

4. Խորացրին իրենց ձեռնարկատիրական և մեդիա գիտելիքներն ու հմտություններն:

Նախագծերն անփոխարինելի են կյանքի մասին գիտելիքներ ու հատկապես , սովորել սովորելու և միջավայրի մարդկանց հետ համագործակցելու, քննադատական մտածողություն, ստեղծագործականություն, թվային և մեդիագրագիտություն զարգացնելու համար, հմտություններ և կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են արդի մարտահրավերներին դիմակայելու համար

Գրականության ցանկ

1.Knoll,Michael (1997):The Project Method: Its Vocational Education origin and International Development

2.Ա. Գասպարյան, Գ. Պողոսյան<< Կրթական նախագծային տեխնոլոգիա>>, Երևան 2015

3.<<Ֆինանսական կրթություն> մեթոդական ձեռնարկ Ս. Հակոբյան, Շ. Ղազարյան

4. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021թ.

5. Dorman Jenifer,Challenge Based Learning, 2010

6.*Nicholas Mark, Challenge Based Learning Guide, 2016*